ՊԱՀՊԱՆԻՐ ՔՈ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

ԲԱՆԱԼԻ ԽՈՍՔ. Գ ԹԱԳԱՎՈՐԱՑ 21.1–3, 19

1 Այս դեպքերից հետո. հեզրայելացի Նաբովթը մի այգի ուներ Հեզրայելում՝ Սամարիայի թագավոր Աքաաբի պալատի մոտ: 2 Եվ Աքաաբը խոսեց Նաբովթի հետ և ասաց. Քո այգին ի՛նձ տուր, որ ինձ համար կանաչեղենի պարտեզ լինի, որովհետև այն իմ տան մոտ է, և ես նրա փոխարեն նրանից լավ մի այգի կտամ քեզ, կամ եթե հաճելի է թվում քեզ, ինչ նրա գինն է, փող կտամե: 3 Բայց Նաբովթն ասաց Աքաաբին. Քա՛վ լիցի ինձ Տիրոջից, որ ես իմ հայրերի ժառանգությունը քեզ տամ:

Նաբովթ անունը (եբրայերեն՝ נָבוֹת, սովորաբար նշանակում է «պտուղներ», «պտղաբերություն», «բերք» կամ «արդյունք»:

ՊԱՀՊԱՆԵՔ ՁԵՐ ՀՈԳԵՈՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Աքաաբ թագավորը ցանկացավ Նաբովթի այգին:

Սուրբ Գրքում «այգին» պարզապես հողակտոր չէ: Այն խորհրդանշում է Աստծո վստահած ժառանգությունը:

«Տեր Աստված մարդուն վերցրեց և դրեց Եդեմի պարտեզում, որպեսզի այն մշակի և պահպանի» Ծն. 2.15

Աքաաբ առաջարկեց. ավելի շատ փող, ավելի լավ հող, ավելի մեծ հնարավորություն...

Բայց Նաբովթը պատասխանեց.

Քա՛վ լիցի ինձ Տիրոջից, որ ես իմ հայրերի ժառանգությունը քեզ տամ:

Նաբովթը հասկանում էր մի բան, որը Աքաաբը չէր հասկանում:

- *Կան բաներ, որոնք վաճառքի ենթակա չեն:*

  Երբեք մի՛ փոխանակեք ձեր երկրպագությունը...

  ձեր համոզմունքները, ձեր ազնվությունը, ձեր եկեղեցին, ձեր աղոթքի կյանքը, ձեր երեխաներին, ձեր ամուսնությունը, ձեր Սուրբ Հոգու ներկայությունը...

- *Եսավը մեկ կերակուրի համար վաճառեց իր անդրանիկության իրավունքը:*

- *Եթե ձեզ առաջարկեն ավելի շատ փող, բայց դրա դիմաց պետք է զոհաբերեք ձեր հավատքը՝ ի՞նչ կանեք:*

  ավելի լավ ժամանակավոր հաճույք... ի՞նչ կանեք:

- *Նաբովթը հասկացել էր որ այգու Տերը Աստված է...*

  Զորաց Տիրոջ այգին Իսրայելի տունն է... Եսայի (5.1-7):

  Մարկոս 12.7-9 – Բայց երբ մշակները տեսան, որ նա գալիս է, միմյանց ասացին. Սա է ժառանգը. եկեք նրան սպանենք, և ժառանգությունը մերը կլինի: Եվ նրան բռնեցին, սպանեցին ու այգուց դուրս նետեցին: Արդ այգու տերն ի՞նչ կանի. կգա ու մշակներին կորստյան կմատնի և այգին կտա ուրիշներին:

  Ես եմ ճշմարիտ որթատունկը, և Իմ Հայրը մշակն է...

- *Այս առակը բացահայտում է սատանայի իրական ռազմավարությունը: Նրա նպատակը միայն վնաս պատճառելը չէ, այլ **ժառանգությունը խլելը**:*

- ***Հիշիր: Աստված քեզ նույնպես վստահել է «մի այգի».***

  Քո ընտանիքը, քո երեխաները, քո ծառայությունը, քո եկեղեցին...

  Մի օր Տերը կգա և կհարցնի. «Ի՞նչ արեցիր այն ամենի հետ, ինչ քեզ վստահեցի»:

Քա՛վ լիցի ինձ Տիրոջից, որ ես իմ հայրերի ժառանգությունը քեզ տամ:

Սաղ. 127.3 – Ահա՛, որդիները Տիրոջ ժառանգությունն են...

ՍԱՏԱՆԱՅԻ ԱՌԱՋԻՆ և ԱՄԵՆԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՁԵՆՔԸ ՁԵՐ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՎԻՐԱՎՈՐԱՆՔՆ Է:

- ***Հովսեփը դրա լավագույն օրինակն է:***

  Հովսեփը կարող էր դառնանալ: Նա կարող էր դառնանալ իր եղբայրների նկատմամբ:

  Բայց նա ընտրեց ներել:

  Մանասե, որը նշանակում է «մոռացություն» կամ «Աստված ինձ մոռացնել տվեց», և Եփրեմ, որը նշանակում է «պտղաբերություն» կամ «Աստված ինձ պտղաբեր դարձրեց»:

Թեպետ դուք խորհեցիք իմ դեմ չարիք գործել, բայց Աստված խորհեց այն փոխել բարիքի, որպեսզի աներ այն, ինչ եղավ այսօր, այսինքն՝ շատ ժողովուրդ ապրեցներ (Ծննդոց 50.20):

ԱՍՏՎԱԾ ՊԱՇՏՊԱՆՈՒՄ Է ԱՅՆ, ԻՆՉ ԻՐԵՆ Է ՊԱՏԿԱՆՈՒՄ

Աստված խստորեն դատեց Աքաաբին...

- *Աքաաբը ձեռք բերեց այգին, բայց կորցրեց իր տունը:*

  Աքաաբի արքայական տոհմը վերացավ:

  Հեզաբելը սպանվեց, և շները լակեցին նրա արյունը...

  Աքաաբի ամբողջ արքայական տունը՝ նրա յոթանասուն որդիներիը, թոռները արքայական ժառանգությունը չշարունակվեցին որպես իշխող տուն:

  Քո դեմ շինված ոչ մի զենք հաջողություն չի ունենա (Ես. 54.17):

- *Նաբովթը կորցրեց իր կյանքը, բայց **չվաճառեց իր ժառանգությունը**:*

  Դժոխքը չի կարող հաղթել այն ընտանիքին, որը քայլում է Աստծո ուխտի մեջ:

  Եվ ջնջեց մեր դեմ դատավճռի ձեռագիրը և այն մեջտեղից վերացրեց ու խաչափայտին գամեց, իշխանություններին և պետություններին մերկացնելով՝ հայտնապես խայտառակեց ու նրանց հաղթեց նրանով (Կող. 2.14-15):

ԱՅՍՕՐ ՆՈՐՈԳԻՐ ՔՈ ՈՒԽՏԸ ԱՍՏԾՈ ՀԵՏ:

Ոմանք միգուց է ասեն.

Իմ ընտանիքը երբեք չի ծառայել Աստծուն:

Եվ այդպես, ես հոգևոր ժառանգություն չունեմ:

- *Բայց բարի լուրն այն է, որ ձեր ժառանգությունը սկսվում է Խաչից:*

  Երբ դուք վերստին ծնվում եք, Աստված դառնում է ձեր Հայրը և դուք դառնում եք Նրա ընտանիքի անդամը:

  Հռոմեացիներ 8-րդ գլուխն ասում է, որ մենք դառնում ենք.

  «Աստծո ժառանգներ և Քրիստոսի հետ համատեղ ժառանգակիցներ»:

ՍԱՏԱՆԱՆ ՍՏՈՒԹՅԱՆ ՀԱՅՐՆ Է

- ***Սատանայի ամենամեծ զենքը միշտ եղել է սուտը:***

  Նա ստեց Եվային Եդեմի պարտեզում:

  Նա ստեց Եսավին՝ համոզելով, որ ժամանակավոր հաճույքն ավելի արժեքավոր է, քան անդրանիկության իրավունքը:

  Նա փորձեց դառնությամբ կործանել Հովսեփի ապագան:

«Սա է ժառանգը. եկե՛ք սպանենք նրան, և ժառանգությունը մերը կլինի» (Մարկոս 12.7):

- *Մի՛ հավատացեք սատանայի ստերին: Հավատացե՛ք Աստծո խոստումներին:*

  Աստված կարող է ընտանիքներ վերականգնելու, սերունդներ բժշկելու, անեծքներ կոտրելու:

  Այս է իմ ուխտը նրանց հետ,- ասում է Տերը:- Իմ հոգին, որ քեզ վրա է, և իմ խոսքերը, որ քո բերանն եմ դրել, չպիտի պակասեն քո բերանից, քո զավակների բերանից և քո զավակների զավակների բերանից,- ասում է Տերը,- այսուհետև մինչև հավիտյանե: (Ես. 59.21)

Հարցրե՛ք ինքներդ ձեզ.

- *Ի՞նչ հոգևոր ժառանգություն եմ թողնում իմ երեխաներին:*
- *Ի՞նչ արժեքներ կապրեն իմ ընտանիքում քառասուն տարի հետո:*
- *Պաշտպանո՞ւմ եմ իմ ժառանգությունը, թե՞ անտեսում այն:*

ԻՆՉ Է ՍՈՒՐԲ ՀՈԳԻՆ ԱՍՈՒՄ ԻՆՁ ԱՅՍ ՊԱՏԳԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ: